

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(1977 թ. փետրվարի 7)

Հարգարժան և բարեջան պատգամավորներ,

Հայաստանյայց եկեղեցին հայ ժողովուրդի եկեղեցին է: Հայ ժողովուրդը ինքը հայ եկեղեցին է, իբրև ինքնուրույն և անբաժան մեկ մասը Աստուծո ժողովուրդի: Եվ հայ եկեղեցին հավասարապես եկեղեցին է մեր ժողովուրդի հոգևորական և աշխարհական զավակներուն, որոնք հավասար իրավունք-ներով և պարտականություններով, աշխատանքի բաժին կստանձնեն պատասխանատվության տարբեր աստիճանավորումներով: Ահա այս ոգիով է որ, կիսորհինք, հավաքված եք դուք այսօր իբրև պատգամավորներ թեմա-կան-եկեղեցական ձեր կազմակերպությանց, հոգևոր իշխանությանը ներքև ձեր թեմական սրբազան առաջնորդի, քննարկելու անցնող տարվա՝ ձեր թեմի և եկեղեցիներու գործնեության արդյունքները և մշակելու հառաջիկա տարվա ձեր աշխատանքներու ծրագիրները:

Հոգեկան անհուն մխիթարությամբ կհաստատենք թե եկեղեցաշինական ծավալուն փայլուն իրագործումներեն հետո, ձեր համայնքները լծված են այժմ նույնքան կարևոր կրթական գործնեության, այսինքն դպրոցաշինա-կան իրագործումներու, ամերիկյան բազմալեզու աշխարհի մեջ կենդանի ու վառ պահպանելու համար մեր մայրենի լեզուն և հայ դպրության ու մշակույ-

թի լույսը, որոնք անկորնչելի արժեքներ կհանդիսանան աշխարհի քաղաքակրթության հորիզոնին վրա:

Հպարտ եղեք մեր քրիստոնեական հավատքով: Հպարտ եղեք մեր ազգային լեզվով և մշակութային արժեքներով: Այսպես է որ դուք՝ ձեր առաջնորդության հանձնված ժողովուրդը, պիտի պահպանեք իր հարազատ կրոնական ու մշակութային ոգեկանությամբ, այսպես է որ ինքնուրույն վավերական արժեք և իմաստ պիտի ստանա ձեր հավաքական ներկայությունը, ձեր հայկական գոյատևումը Ամերիկայի մեջ, ուր դուք ամեն ազատություն կվայելեք նաև այդ տեսակետեն:

Այս խոհերով և հորդորներով Մենք ձեզի կմաղթենք աշխատանքի անսպառ կորով, աննահանջ հավատք և պայծառ լավատեսություն ձեր առաքելության նկատմամբ և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն ձեզի ամենուդ կբերենք Մեր սրտագին գնահատանքը և օրհնությունը հայրական:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա. Կորնթ. ԺԶ 13—14). ամեն: